62. ՊՍՊՂՈՒՆ ՓԵՏՈՒՐ

Կէլնի, կէլնի, կէլնի, չէլնե, կէլնի, կէլնի մեյ շատ բարի թագավոր: Ափսոս որ էտւա թագավորը վեր աշխարհիս ունի մենակ մեյ խատ լաճ-տղա, են էլ ոչ տան ի, ոչ տեղաց, ինքն ուր գյլխու տեր: Որ քիչ-շատ կմեծնա՝ խորից մորից գյաղտիկ կլցի մեկ այբա ոսկի ու արծաթ, ուր յար-յաթաղ կժողվի, կկապի ձիու թանրքյ, թարկ-դյունյա կանի, են աշխրից կերթա դիյարի-կուրբաթ: Շատ կերթաս թե քիչ՝ աստված գիտի, ճամբխի վերեն կտիսնա,՝որ ինկած է մեյ խատ պսպղուն խազարան ռանկի խավքյու փետուր: Ձիուց կէջնի որ փետուրը վերուցի. աստծու խրամանքյով ձիուն լեզու կէլնի, խաբար կուտա կասի. - Կտրիճ, լսիր ձիկ. ձեռ մի՛ տար էտւս փետուրին, իսկի էլ մի վերուցե. էտա փետուրը մեյ բէ-ուղուր զուստ ի, քյո գյլխուն բալեմ կբերի:

Լաճը ականջ չանե, կվերուցի փետուր, կզանի ուր գյլխուն, ձինը կքշի, առաջ կերթաս ուր ճամբախն:

Կերթա, կերթա, կխասնի մեյ քյաղաքյ. ներս կմտնի: Դողրի են երկրի թագավուրու սարի տկից ընցած ժամանակ՝ թագավորը ուր քյոշկից կիրիշկա, որ կտիսնա իսոր գյլխին խրած փետուրը՝ ամր կանի, շոտով էտւա տղին կկանչի ուր մոտն, ինոր բան ունի ասելու:

Լաճը կէլնի թագավուրու երես. թագավորը կխաոցուցի.

- Կտրիճ, տյու վո՞վ ես, վո՞վ չես, ու՞ստ կուգյաս, դյո՞ր կերթաս, ո՞ր աշխրիցն ես, ինչի՞ ես իկե:

Ձըմեն թարսվի խաոց ու փորձ կանի:

- Վով եմ, վով չեմ՝ ես էլ չեմ գիտե. ուստ կուգյամ, դյոր կերթամ, են էլ չեմ իմնա. ես էլ իմ գյլխու մեկն եմ, որտեղ ուտեմ ենտեղ էլ կմնամ, կքյնեմ, կզարթնեմ, ըսըսկնա օր կընցուցեմ:

- Որ ըսկուն ի, - կասի թագավորը, - մունջ արե. տյու էլի ձիկ լաճ, ես էլ քե խեր, ապրենյք մեյտեղ, շինեյք ավիրենյք մեյտեղ, մեռնեյք էլմ մեյտեղ. էսա զըմեն մալ ու դովլաթն էլ թող էլնի քե:

Լաճը խավան կմնա թագավուրու խոսքին, կէլնի ինոր տղա: Են ոսկե

փետուրն էլ կզանեն էօդի պատ, որ գիշեր-ցերեկ, քյանձ արեգական, քյանձ ակունք-ջավահիր փելս կուտար կփլփստար:

Թագավուրու վազիրները որ կտիսնան իսոնց էրկսի՝ խորն ու տղի, սերն ու մուհապսաթը՝ շատ կնախանձեն. կուզեն լաճուն կուրիսցուցեն, յա սպանեն զյաղտիկ, յան էլ մի տեղով գայ անեն: Օրմ էլ կասեն թագավուրուն.

- Թագավոր ապրուած կենա, շնախավոր էլնի քյո նոր լաճ-տղեն, շնախսվոր քյո նիշուն փետուր. էսա փետուր որ ըսըսկընա փելս կուտա քյանձ արեգական, ապա իսոր խսվքյն ի՞նչ կանդար էլ խորոտ կէլնի: Էն խսվքն անջախ քյո էօդին, քյոշկ ու սարին լայեղ ի:

Վեզիրները մեկը մեկիս ավելի կհորդորեն թագավորին, որ անպատճառ մեկն օղորկեն էն խավքյու իտվիս, դեոր որ ի՝ բռնեն, բերեն: Վո՞վ էրթա խավքյու իտվիս, վո՞վ չէրթա բիրի՝ վիճակը կիյնի լաճու վերեն: Իսոնց չար միտքն էլ էն էր, որ լաճուն օղորկեն, էրթեր էլ չիգեյր: Թագավորը ամր կանի որ էրթա, գյլոխ տա, ինչ կանի անի՝ խավքյ բերի:

Էտա լաճն ի, լավ-չէ չի ասե. կէրթա կմտնի փսկյախ մոտ ուր ձին, կինի ձիու վզովն, շատ կմտմտա, կուլա կաղավաղի, ըսկուն որ արտյունք կթափի վեր ձիու ոտներաս:

Ձիուն լեզու կէլնի, կդառնա դեխ լաճն ու կասի. - Կտրի՛ճ, էլմ ի՞նչ էլե քե, ինչի՞ կուլաս, ինչի՞ կմեզես, կմտմտաս. չէ՞ որ էն օր ճաբխի վերեն քեյզ ասի, մի՛ ձեռ տա էտա փետուրին, քյո գյլխին բալա-պատուխաս կէլնի. տյու ձիկ ասկանջ չարիր, մկա էլ ի՞նչ կտանջվես, ինչ որ անես՝ ֆայդա չկա: Կէրթաս մոտ թագավոր, կխնդրվես որ քե տան, հազըրեն քյառսուն բեռ կորեկ, քյառսուն էլ կաթըր, մեյ բեռ էլ խատ-խատ իստկուկ գյարի քյո ձիու խամար. իսոնյք որ հազըրեցին՝ բանդ էլ կաջողվի, մեկել օր կկանչենյք մեր աստված, կիյնենք ճամբախ, աստծու զորութենով կէրթանյք էն խավքը կբերենք:

Լաճը կէլնի թագավորու իրես, կուզի ուզածները, ինչ որ ձինը ասեց: Թագավորը էն սհաթին ամր կանի ուր մարդերաս, որ շոտով հազըր անեն լաճու ուզածները: Մեկել օր լաճն ու ձինը կկանչեն ուրենց աստված, բեռները կիսկեն առջևներ, կինեն ճամբուսխ, ուտիղ դեխ խավքյերաս երկիր, դեխ Արապստանա չոլերն: Կընցնեն շատ ձորեր ու դաշտեր, սարեր ու անբնակ, անշեն երկիրներ, անջուր վերանա չոլ-չոլստանյք, էլ մարդու երեն չեն տիսնա: Կէրթան, կէրթան մեկ անխլիս դաշտիմ մեջ կիջնեն: Լաճը թագավուրու գյաֆ տալուց էնկանդար չի վախենա, որչափ որ ուր պատվուց, կուզի որ մեծ անունըմ վաստկի էն երկրի մեջ:

Ձիուց տակ կիջնի, բեռները կտեղավորի, ձինը կկապի էն տեղ. կորեկ կցրվի մեջ էտա ծով-դաշտին: Մեկեն տիսնաս, որ խազար ու բյուր անթիվ խավքյեր, հըմեն կողմիս, երկնուց երես բռնած կուզյան կլեցվեն էտա դաշտին մեջ. իսոնց էրամը սև ամպի պես բռներ ի դաշտի երես,

խազար ու մեկ փեսակ անուշ-անուշ կվկվոցի, ճլվլոցի ձենը բոներ ի անսախմանյք դաշտ: Կվկվալով, ճվճվալով ցփնած կորեկները կքաղեն: Լաճու ուզած են փելսկտավոր խավքն էլ իտոնց մեջ կէլնի. ուշիկ-ուշիկ տափ-տափ անելով, պախկվելով կխասնի վեր խավքյուն, կբոնի: Խավքն էլ խավք մի՛ ասե, խավքեյրաց թագավորն ասա. փետուրները փլփստուն, քյանձ արեգական շառավիդյք, թևերը էրկնածիգ, քյանձ սինամա խավքյու, կատարն փայլուն, քյանձ ակն ջավահիր: Ախըր շատ զոռ ու դժվարութենով կբերեն կխանեն թագավորու երես: Աշխարհ ալամ կվազեն սարեն, փիսնալու են խավք:

Վազիրները կտիսնան, որ լաճը սալամաթ իտ ի դառցեր՝ ուրիշ չարութեն կմտմտան, կասեն. էսա խավքյուն գյորա իսոր ծառ-չինարի պիտեր. ոսկի կաֆաս պիտեր, խավքն ինոր մեջ նստեր, ճլվլեր, թագավուրուն անուշ քյուն բիրեր: Էլի մի շատ ծանդր-ծանդր բաներ առաջ կբիրեն, էլի լաճուն կուզեն օղորկել շատ հեռու տեղեր, որ կորսվի:

Լաճն ի, էլմ ուր ճար կթալի մոտ ձին:

Ձին կասի. - Կտրիճ, մի՛ վախենա. գնա մոտ թագավոր, ուզի մեյ խատ ոսկուց շինած պալաս և մեկ բեռ էլ իստկուկ գյարի:

Էնպես էլ կանի: Առավոտուն խեստ բարի լուսուն կինեն ճամբախ: Ձինը կասի. - Որ կխասնենյք մոտ սալվի-չինարի ծառ՝ պալթեն զարկ ծառին, շոտ էլմ խեծի, քշի ձիկ, էլ մի՛ իրիշկե իտկդ, ծառը իրան-իրան կինի մեր իտվիս, կուգյա:

Կխասնեն չինարի ծառի մոտ որ չէ՝ պալթենը ծառին զանել, ձինը հեծնել ու քշել մեկ կէլնի: Սալվի-չինարի ծառ կինի ինոնց իտվիս, էրկեն-էրկեն կուգյա չյում ինոնց երկիր, չյում թագավորու խաս-բաղչի օրթա տեղ կտնկվի:

Վազիրները տեսան որ ճար չէլնե, չեն կանա վեր են տղին, չեն կանա կուրիսցուցել. դյոր էլ որ օղորկեն՝ կէրթա անվնաս կդառնա, կասեն թագավուրուն, որ էրթա պառավ դնու ճոչ լաճ, ուսթա Նազար բերի, որ ինոր խամար ուզած քյոշկն ու սարեն շինի:

Էլմ լաճը ուր ճար կթալի մոտ ձին, կուլա կաղավղի:

Ձինը կասի. - Կտրի՛ճ, էլմ մի՛ վախենա, գնա թագավուրուցն ուզի մեյ ջուխտ ձիու ոսկի նալ. են կզանես իմ ոտների տակ. աստծով չյում վաղն էսա գյահ, ուսթեն էստեղ հազրը կանենյք:

Էն մեկել օրն ի, լաճն ու ձինը հեստ աղոթրնին, ոտքեր շաղաթրթաղ կինեն ճամբախ: Ձինը կասի. - Կտրի՛ճ, ես քե դյոր որ կտանեմ՝ կտանեմ, ձեն չհանես, մունջ կաց, իսկի մարդու էլ բերան չբանաս:

Կէրթան կխասնեն խորիմ վերեն, կտիսնան ճոչ քյարըմ վեր ինոր բերնին թալած:

Ձինը կասի. - Կտրիճ, կբանաս իսոր բերան, կմտնես ներս, կխասնես էրկթե դռանըմ, դռան կզանես, տյուս կուգյա պառավ մը. են ուսթի մերն ի. կասես. կանչի ուսթեն. ըսկուն կասես որ ճոչ դնը չիմնա, որ իմցավ՝ քյո ճոչ պրտուճդ ականջդ կթողնի: Պառավը ուսթին ձեն կուտա, կուգյա տյուս, գյաղտիկ կվերցնես ուսթենը ու կուգյաս:

Ինչխ որ ձինը պաստվիրեց՝ լաճը ըսկուն էլ կանի:

Ինոր բախտից ուսթենը վեր էրկթե դռան կայներ էր, դնն էլ քյնուկ: Շոտրով կառնի ուսթեն, խորից տյուս կէլնի, կթալի ուր ձիու թարքյ, կքշի դեխ թագավուրու երկիր:

Մի քիչ վերջ դն կզարթնի, կինի ինոնց իտե, հահայի զըմեն էլ սպանի: Լաճը ուր մեջքին խրած խնձորներից մեկը որ կթալի՝ խնձորը կդառնա մի ախագիյն կարմիր ծով: Պառավ դնը կմտնի ծովի մեջ, քիչ էր մնացե, որ բռներ ձիու պոչ. լաճը խնձորմ էլ կթալի. կդառնա խիտ-մեշաս, որ մարդ, անասուն չկանա ընցնե մեջից: Դնը կֆռա կֆռֆռա՝ եզրանց կուգյա ինոնց կխասնի. կանի որ ձիու պոչը բռնի՝ լաճը խնձորմ էլ կթալի, կէլնի մեկ ախագին դար, դարի օրթիցն կտրիսնա որ ծուխ, մուխ պալան-պալան տյուս կուգյա: Դարը կպատռվի, դնն էլ կէրթա կինի մեջ, կկուրիսի, էլ տյուս գալու ճար չէլնե. կսատկի, կմնա էն տեղ: Տղեն, ուսթեն ու ձինը սաղ-սալամաթ կընցնեն էսա փորձանքից էլ, չյում իրիկումն ուրախ սրտով կմտնեն թագավուրու սարեն:

Ուսթա Նազար մի շատ անվանի ուսթա էր: Թագավուրու տուն խասնելուն պես՝ ամր կանի որ չէ՝ ասպծու կամքյով մեջ մեյ սհաթի էն ախագիյն քյոշկն ու սարեն կշինվի: Էլմ էլ չար վեզիրները իսորով էլ չեն գյոխանա:

Կտրիսնան որ լաճ զըմեն ինոնց ասած բաները կատարեց, կասեն թագավուրուն. - Թագավոր ապրած կենա, էսա զըմեն բան իրա կարգովն ու զարդարանքյով էլավ, կատարվեց, ամմա մեկ բան պակաս ի, որ էն էլ էլավ՝ էլ քեյզի խասնող մարդ չկա: Օղորկես Արապստանու խալիֆի աղջիկ բերես, անես քե կնիկ, որ էսա փառքին խետ վելես-վայելես աշխարհ:

Աստված տյու փրկես փորձանաց, էսա զըմենից դժարն էր:

Լաճ էլմ'էլ կմտնի փակյախ, մալուլ-մռութ կկայնի ձիու երեսն վեր, էլմ կյուլա կաղավըղի, մեջ ուր արտսյունքին կտզկվի: Ձինը կիմնա ինոր սրտի նեդութեն, կասի. - Կտրի՛ճ, էլմ մի՛ վախենա. կէրթաս թագավուրուց կուզես քյառսուն արաբա չորսական լծկան ձիով, մեկ արաբա էլ ոսկուց շինած ակնունյք-ջավահիրով զարդարված, հրմեն ձին հազար-ոսկանոց էլնի, քյառսուն ձեռք էլ արփշմե, զարբաֆե խալավ, որ Արաստանա խալիֆի աղջիկ բերելն զոռ չէլնի մեզիկ խամար:

Էսա թայլիֆը թագավուրուն շատ դժար էրնաց. կկանչի վեզիրները. ախըր պարտք-խաստ կանեն, լաճու ուզածը կկատարեն:

Լաճը և ուր ձինը մեկել օր կինեն ճամբախ:

Շատ կէրթան թե քիչ՝ աստված գիտի, ռաստ կուգյան մի ինչ-որ մարգում'. կտրիսնան որ ախագիյն ջաղցիմ' քյար առե մեջ մատին, ըսկուն ինչ ֆռիկ կֆռացուցի, չի էլ նեղանա ինորից: Զարմանյք կմնան, կասեն. - Ի՞նչ, աղբեր, էտա ի՞նչ մարիֆաթ ի:

- Մարիֆաթն էն ի, որ թագավուրու լաճ գնացե խորի միջուց, պառավ դնուց ուսթեն բերե, մեկ թախկի մեջ քյոշկ ու սարա յի կայնըցուցե, ըսկուն մարիֆաթ կէլնի, էսա իմ ոչինչ:

Կասի. - Էն գյո ես եմ. արե էլենք աղբեր:

Կէլենն ու կէրթան: Քիչ'մ էլ առաջ կէրթան. կտիսնան մարդմ' էլ բերան դրե աղբրի դեմ, գյայած ջուրը կխմի կխմի, չկշտանա: Կասեն. - Էս էլ աղեկ մարիֆաթ ի:

- Մարիֆաթն էն ի, որ թագավուրու լաճը ի՛նչխ ի գնայե, սինամախավք բերե, սալվի-չինարի ծառն էլ խեստն իկե:

Կասի. - Էն գյո ես եմ. տյու էլ արե. էլենյք աղբեր:

Էն էլ կէլնի: Մի քիչ էլ կէրթան. կտիսնան որ մարդմ' էլ ըսկուն կքեյլի, որ մեկ ադյում կթալի՝ Վարագա սարը ուր տարերով կսոջի. ինոր ոչ ձի կխասնի, ոչ խավք: Կկանչեն, կկանչեն, անջախ անջախ կդուադրեցուցեն. կասեն. - Աղբեր, արե, տյու էլ էլի մի խեստ աղբեր:

Էն էլ կէլնի, կէլեն չորս ընկեր:

Քիչմ' էլ կէրթան. կտիսնան որ մարդըմ գյո ականջ դրե գեյտնի վերեն, քյաղայք ինչ որ ասեն, խաբար տան՝ էն էնտեղ կլսի: Կասեն. - Էսա զըմենիցն էլ լավ մարիֆաթ ունի:

Ինորն էլ կառնեն խեստ ուրենց, կէլենն խինգ աղբեր կամ ընկեր:

Շատ կէրթան թե քիչ, չյում կխասնեն Արապստանու թագավուրու քյաղայքն: Իրեյք օրվա ճամբխից գատ, հեռուն ուրենց արաբեյք կթողնեն, գեյղիմ' մոտ, ուրենյք կմոտկնան քյաղքիյն, դերգյահի դռան մոտ:

Ադյում թալողն ի, մեկ անգամ որ ադյում կթալի՝ կխասնի կկայնի վեր թագավուրու էօդի դռան: Բարև, աստծու բարին կանի ու կասի. - Թագավոր ապրած կենայք, քյո աղջիկ պիտի տաս մեր թագավուրուն:

Արապստանա թագավորն ի, կշվարի էսասկնա նակաֆըլ թայլիֆի վերեն. չգիտե որ ի՛նչ ասի. ի՛նչ պատասխան տա:

- Ձիկ իրեյք օր ժամանակ տուր, - կասի:

- Որ ըսկուն ի՝ մեր մարդերաց ուտեստ պիտի, տասնխինգ խազար ոչխար, ինոր գյորա խաց ու պրինձ, որ ուտեն կշտանան, աչկեն չյում քյո երեյք օրն թըմըմի, թե չէ մնալու ճարը չկա, կուգյան, կլեցվեն քյաղայք, ինոնց չեյք կանա խաբար խասկըցուցե:

Առջի օր մեյ դան խաց, ջուր, ամեն ինչ կուտան, կտիսնան որ չեն կանա ինոնց կշտացուցե. վեզիրները մեջքներ կումփաս կանեն, որ գիշրով ասքյրներ օղորկեն, զըմենին էլ սպանեն, բալքի թե ըսկուն ազատվեն ինոնցից:

Ականջ սրողը կիմնա ինոնց խորհուրդը, կասի ընկերներաց. ինոնյք էլ կուգյան կժողվեն, մեյ քյուշիմ խատ փեստե մարդ կշինեն, խալավ կխագյուցեն, կկայնըցուցեն դաշտի մեջ: Թագավուրու ասքյրներ կուգյան, կզանեն կզանեն թրով-թուվայքյով, չյում կնեղանան, կաջըղեն, կթողնեն կէրթան. ըսկուն կխավատան, որ թե զըմենին էլ սպանեցին:

Առավոտուն ջաղացի քյար ֆռացուցողը կէլնի, ճոչ-ճոչ պալ-պալ քյարեր կթալի մեկ յան, փոս տեղերը կլցուցի, որ էլմ ուրենց չատրներ կզանեն, կնստեն: Ադյում թալողն կօղորկեն մոտ թագավոր պսպասխան բերելու: Թագավորը կտիսնա ինոր, սիրտը կվըկվըկա. կվախենա:

- Թագավոր ապրած կենա, էսա ձեր երկիրը ի՞նչ կանդար ճանճ-մժիկ կա. չթողին որ մենք դաստարեմք:

Թագավորը մատը կկծի, ինքն ուր կմտմտա, կասի. «Մեր ասքյրներաց արածը ոչինչ էլե»: Էն օր էլ ինոնց խամար հաց կուտա: Էն մեկել օր կտիսնա, որ չարա չէլնե խեստ իտոնց, գյաղտիկ ամր կանի, որ բարութով լաղըմեն: Ականջ ստողը որ կլսի՝ շոտ իմաց կուտա ընկերներաց. շոտով իրենց չատրները թար-թախում կզատացուցեն ուրիշ տեղ. էլմ կբերեն փեստեր մարդերը կկայնըցուցեն ուրենց տեղ: Բարութը որ կվոթկա կկպնի՝ իտոնց ամենինն վնասմ՝ էլ չէլնե:

Թագավորը կտիսնա, որ էլ ճար չէլնե խեստ իտոնց, կկակղնա, կկանչի ուր սարեն, շատ ազաթ-իքրամ կանի: Մեյ կողմից էլ գյաղտիկ ուր մարդերաց ամր կանի, որ բաղնիսը էնչամ-էնչամ վառեն, չյում ինոր պատի մեջի երկթներն էլ խալեն, որ էսա մարդերը բաղնիսը մտած ժամանակ, զըմեն էլ խուրթ-խաշ էլնեն, մրկեն, իրիցեն, մեյն էլ չմնա սաղ: Աղբյուր կուլ տվողը, կէրթա, բերանն լիք ջուր կանի: Որ կմտնեն բաղնիս՝ ջուրն ըսկուն կֆշացուցի, որ տյու կասես սարի գյլոխ նստած, սարին-քյամի ի, որ կուգյա իրիսիդ:

Կլոդկնան, կուգյան մոտ թագավոր գյանգյատ, կասեն. - Էսա ի՞նչ երկիր ի, որ վառելիս չկա, բաղնիսի մեջ շատ ցուրտ էր:

Թագավուրու ճարը կկտրի. էլ փորձանք չմնաց, որ չարեց ինոնց վնասելու, ուզեց ապա բարեկամութեն հաստատել:

- Ես կուզեմ քյառսուն արաբա չորսական ձիով.
Մեկ ոսկի արաբա, ոսկուց ու ջավահիրից շինած,
Քյառսուն ձեռք խալլավ զարբաֆ կումաշից,
Որ իմ աղջիկը ուր քյառսուն խալայեղներով տամ ձե:

Համան շոտ-բե-շոտ կխասնեն, էն գատու գեյղից կբերեն, իրենց խեստ բերած էն զըմեն ապրայնք, թե՛ ձիերը, թե՛ ոսկի արաբեն: Իրենք էլ իրենց ընկերներով կզատվեն-կզարդարվեն կէրթան թագավուրու դուռ խարսնառեյք:

Էն քյաղքի մարդերը որ կտիսնան իսոնց պատրաստութեն, իսոնց գար ու զարդարայնք՝ կզարմանան, պռուկները կկծեն, բերանին բաց կմնա, կասեն. - Խալալ էլնի մարդոց արածն:

Թագավուրու տղեն կէլնի մոտ էտա թագավոր խոշ-բեշ կէլնի, նոր-նոր ճանչվորութեն կուտա, կպատմի ուր ահվալն:

Թագավորը կասի. - Այ մարդեր, որ տյուք էտասկընա շատ մարիֆաթի տեր եք, ապա ձեր թագավո՞րը ինչքան. իմ մեյ խատ աղջիկը թող խալալ էլնի ինոր, տարեյք, բարով վայելի:

Էն մեկել օր, տղեն ու աղջիկը մեյտեղ կդնեն ոսկի արաբի մեջ, քյառսուն ձեռք զարբաֆ-կումաշ շորերը կխագյուցեն էն քյառսուն խալայեղներաց, էլմ ուրենց թար-թախըմով, ձիով, ձիավորներով կինեն ճամբախ ու կէրթան:

Ախը՛ր աստված խեստ տղին յար էր, անփորձ անվնաս էն զըմեն նենգութենից էկավ խասավ. Արապստանու թագավորի աղջիկն էլ ըսկուն առքով-փառքով բերեց:

Աղջիկը որ տարան թագավուրու էօդեն նա մյուքյուն, չսիրե ինոր որ չսիրե, չի ուզե իրիկ անել թագավորին որ չի ուզե: Վազիրները, իշխանները հըմենք մնացին սև շիվար, չեն գիտե որ ի՛նչ անեն, ի՛նչպես համոզեն աղջկան. անդառնալի ի մնացե վեր ուր կամքին. խազար մեկ աղաչանք, պաղատանք փարա չանե:

Տյու մի՛ ասել, որ աղջկա աչք, միտքն ու սիրտը դեխ էտա տղեն ի, էն օրվնից որ ինոր տիսեր էր իր խոր երկիր, Արապստան:

Թագավորը կտիսնա որ ճար չէլնե, ինքն էլ կիմնա աղջկա միտք, որ զոռով բան չէլնե. կկանչի էն զըմեն վազիրները, աղջիկը թասլիմ կանի տղին, ինչպես ուր խալալ մալ:

- Գնացեյք, որդիք, իրարու սերն վայելեք, իմ մախիս վերջն էլ տյուք կնստեք իմ թախթին, կվելեյք իմ տերութեն:

Թագավորը էսա օրհնութենով տղեն ու աղջիկ մոտեցնի իրար. յոթն օր, գիշեր ու ցերեկ խարսնիս կանեն, մեծ դամով ու խնդումով, կխասնեն իրենց մուրազին:

Լաճը նոր կմտմտա, որ էն պսպղուն փեստուրը ուր գյլխին բալապստուխաս էլավ, ամմա աստվածը խեստ ուր յար էր, մթնից լոս խանեց, ազատեց փորձանքից:

Աստծուց-էրկնուց իրեյք խատ ոսկի խնձոր իջավ, մեկը առռնին, մեկը լսողին, մեկն էլ ականջ ալրողին: